ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2024թվականի N 088-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 53-Ա, 58-Ա, 59-Ա ԵՎ 69-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ 047-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 1-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներով, Արենի համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Արենի համայնքի ավագանու 03.05.2024թվականի <<Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոխելուն համաձայնություն տալու մասին>> թիվ 53-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ որոշման բովանդակության 1-ին և 4-րդ մասերի մեջ <<խաղող>> բառը փոխարինել <<բազմամյա տնկարկ>> բառերով:

2. Արենի համայնքի ավագանու 2024թվականի թիվ 58-Ա, 59-Ա և 69-Ա որոշումների հղման մասից հանել <<և 37-րդ հոդվածի 1-ին մասի>> բառերը և թվերը:

3. Արենի համայնքի ավագանու 03.04.2024թվականի թիվ 047-Ա որոշման հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) աղյուսակի 24-րդ տողում <<205 200>> թիվը փոխարինել <<230 000>> թվով,

2) աղյուսակի 25-րդ տողում <<162 000>> թիվը փոխարինել <<180 000>> թվով,

3) աղյուսակի 30-րդ տողում <<270 000>> թիվը փոխարինել <<330 000>> թվով,

4) ընդամենը տողի մեջ <<5 518 360>> թիվը փոխարինել <<5 621 160>> թվով, <<6 255 370>> թիվը փոխարինել <<6 358 170>> թվով: